ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Գյումրու նստավայր
✉ ք.Գյումրի,Անկախության հրապարակ 7
հեռախոս, ֆաքս (0312) 5-70-98

ԴԴ-9/5- 875/14
,,14" փետրվարի 2014թ.

Արմեն Սերյոժայի Պետրոսյանին
/ք.Գյումրի,Պարոնյան փողոց, տուն 27/
ներկայացուցիչներ՝ Արթուր Ալբերտի Սաքունցին
/ք.Գյումրի,Պարոնյան փողոց, տուն 27/
√ Արայիկ Միքայելի Զալյանին
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է ՀՀ Վարչական դատարանի 14.02.2014 թվականի թիվ ՎԴ5/0132/05/13 վարչական գործով վճռի օրինակը, Ձեզ ի գիտություն:

ԴԱՏԱՎՈՐ՝ Է.Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ Ն. ԱԲԳԱՐՅԱՆ

Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

14 փետրվարի 2014թ. ք. Գյումրի

վարչական գործ թիվ ՎԴ5/0132/05/13

Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Էդ.Նահապետյանի

քարտուղարությամբ Մ.Ասատրյանի

Մասնակցությամբ՝ հայցվոր՝ Արմեն Սերյոժայի Պետրոսյան անձնագիր AC 0577028, տրված 06.02.1999 թվականին, 016-ի կողմից, երկարաձգված է մինչև 06.02.2014 թվականը

ներկայացուցիչ՝ Ա.Զալյան անձնագիր AF 0384205, տրված 18.12.2001 թվականին, 018-ի կողմից, երկարաձգված է մինչև 18.12.2016 թվականը

պատասխանող՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտ

ներկայացուցիչներ՝ Ս.Խաչատրյան, վկայական ՈՍ 39064, տրված 11.05.211 թվականին

Հ.Վարդանյան, վկայական ՈՍ 44255, տրված 21.05.2012թվականին

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Արմեն Սերյոժայի Պետրոսյանի /ներկայացուցիչներ՝ Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զալյան/ ընդդեմ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի՝ ,,Ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ոստիկանների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և թիվ 326415 վարչական իրավախախտման մասին ակտն անվավեր ճանաչելու պահանջների մասին"

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Արմեն Սերյոժայի Պետրոսյանը /ներկայացուցիչներ՝ Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զալյան/ հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան /Գյումրու նստավայր/՝ ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ոստիկանների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և թիվ 326415 վարչական իրավախախտման մասին ակտն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը

դատավոր՝ Էդ.Նահապետյանի կողմից 12.04.2013 թվականին ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ, 18.05.2013 թվականի որոշմամբ սույն վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 14.02.2014 թվականը:

Հայցվորի փաստարկերը, հիմնավորումները և պահանջը.

Իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները դատարանին է ներկայացրել հետևյալ պատճառաբանությամբ.

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը.

Հայցվորը 2013 թվականի մարտի 25-ին իր բնակարանում նախաճաշը ավարտելուց հետո փորձել է մեկնել աշխատանքի, սակայն ոստիկանները առանց ներկայացնելու որևէ իրավական հիմք արգելել են հայցվորին իրականացնել իր մտադրությունը և շուրջ երեք ժամով ազատազրկել են նրան, իսկ նրան պատկանող վազ VAZ 2106 մեքենան երեք օր ապօրինի պահել ճանապարհային ոստիկանության հատուկ պահպանվող տարածքում: Սույն հայցով վիճարկվում է վարչարարության իրավաչափությունը՝ դրա ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հայցվորի կրած վնասների փոխհատուցման վարույթ նախաձեռնելու նպատակով:

2. Փաստերը, որոնց վրա հենվում են սույն հայցի պահանջները

2.1. Արմեն Պետրոսյանը (այսուհետ նաև հայցվոր) հանդիսանում է «ՀԱՊ» ՍՊԸ, ԳԱԼԱ (այսուհետ ԳԱԼԱ) հեռուստաընկերության վարորդը:

2.2. 2013թ. մարտի 15-ին ժամը 14:00-ի սահմաններում Արմեն Պետրոսյանը մեկնել է իր Պարոնյան 27 հասցեում գտնվող իր բնակարան ճաշելու, ճաշելու ժամանակահատվածում Գյումրիի Ճանապարհային ոստիկանության երկու աշխատակիցներ թակել են նշված հասցեի դուռը և հայտնել նրան, որ իրենց հետ մեկնի Ճանապարհային Ոստիկանություն «պետը զրուցելու բան ունի» պատրվակով:

2.3. Ոստիկանության աշխատակիցները Ա. Պետրոսյանին չեն ներկայացրել իրենց հնարավոր գործողության (ոստիկանության բաժին տանելու) Ա,Պետրոսյանի իրավունքների սահմանափակման հիմքերն ու պատճառները, չեն ծանոթացրել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, չեն ներկայացրել իրենց գործողությունների իրավական հիմքերը:

2.4. Հայցվորը ոստիկանության աշխատակիցներին հայտնել է, որ ինքը պետք է մեկնի աշխատանքի, եկել է ճաշելու և զրուցելու ժամանակ չունի, եթե անհրաժեշտ է թող կանչեն օրենքով սահմանված կարգով:

2.5. Ոստիկանության աշխատակիցները Ա,Պետրոսյանին զգուշացրել են, որ, անպայման, պետք է նրանց հետ գնա հակառակ դեպքում ստիպողաբար կտանեն:

2.6.Հայցվորը ոստիկանի ուղեկցությամբ նստել է իրեն պատկանող VAZ 2106 մակնիշի ավտոմեքենայի ղեկին, նրա կողքն է նստել ճանապարհային ոստիկանության աշխատակիցը, իսկ մյուս ոստիկանը՝ ճանապարհային ոստիկանության մեքենայով ուղեկցել է նրանց:

2.7. Հայցվորի բջջային 093128001 հեռախոսահամարին զանգահարել է ԳԱԼԱ հեռուստաընկերության տնօրեն Վահան Խաչատրյանը և հայտնել, որ անմիջապես ներկայանամ աշխատանքի:

2.8. Հայցվորին ուղեկցող ոստիկանության աշխատակիցը, տնօրենի հեռախոսազանգից հետո հայտնել է, որ «պետք է, անպայման, գնան «գայ» նոր դրանից հետո կներկայանա աշխատանքի»:

2.9. Հայցվորը հայտնել է, որ ինքը գտնվում է աշխատանքի մեջ և պետք է ներկայանա աշխատանքի և երբ հասել են Գարեգին Նժդեհ – Շեռլին (Նանո հոթելի դիմաց) փողոցների հատման խաչմերուկ հայցվորը ուղղություն է վերցրել դեպի իր աշխատանքի վայր ԳԱԼԱ հեռուստաընկերություն:

2.10. Ոստիկանության աշխատակիցը, որը նստած է եղել հայցվորի կողքը, ձեռքը գցել է ղեկին և քաշել հակառակ ուղղությամբ, իսկ Ճանապարհային ոստիկանության մեքեանան, որը ուղեկցել է հայցվորին անմիջապես փակել է նրա երթևեկելի ճանապարհը և հայցվորը արգելակել է:

2.11. Ճանապարհային ոստիկանության մեքենան վարող ոստիկանը մեքենայից անմիջապես դուրս է եկել և հայտնել, որ Ա,Պետրոսյանն «քշի «գայ»», որին վերջինս պատասխանել է, որ տնօրենը շտապ զանգահարել և կանչել աշխատանքի:

2.12. Ոստիկանության աշխատակիցները կատարել են ահազանգ հայտնելով, որ «վարարողը չի ենթարկվում և անհրաժեշտ են լրացուցիչ ուժեր»:

2.13. Մի քանի րոպե անց եկել են ևս 3 Ճանապարհային ոստիկանության մեքենաներ, որոնց գլխավորել է Ճանապարհային ոստիկանության աշխատակից Մարտին Սարգսյանը:

2.14. Ոստիկանության աշխատակից Մարտին Սարգսյանը անմիջապես մեքենայից իջնելով հարձակվել է հայցվորի վրա և սկսել է քաշքշել հայցվորին նպատակ ունենալով նստեցնել մեքենան (նկարահանված տեսանյութը կից ներկայացվում է):

2.15. Ոստիկանության աշխատակից Մ. Սարգսյանը ստիպել է հայցվորին, որ մեքենան տանի Ճանապարհային ոստիկանության հատուկ պահպանման տարածք:

2.16. Ա.Պետրոսյանն և ԳԱԼԱ հեռուստաընկերության լրագրողները Ոստիկանության աշխատակիցներին մի քանի անգամ բացատրել է, որ ոստիկանություն հրավիրելու օրենքով սահմանված կարգ գոյություն ունի, որին օրենսդրությամբ տրված է ծանուցագիր հասկացողությունը:

2.17. Ոստիկանները Ա,Պետրոսյանին չեն ներկայացրել նրա իրավունքների սահմանափակման հիմքերն ու պատճառները, չեն ծանոթացրել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, չեն ներկայացրել իրենց գործողությունների իրավական հիմքերը:

2.18. Արմեն Պետրոսյանին տարել են Ճանապարհային ոստիկանության պետ Ա. Կարապետյանի մոտ: Վերջինս հայտնել է, որ Գյումրի քաղաքի ոստիկանապետից ստացել է հաղորդագրություն, որ իբր Ա.Պետրոսյանը կատարել է Ճանապարհային երթևեկության կանոնների խախտում Գյումրի քաղաքի Ռիժկով փողոցի վրա:

2.19. Ա.Պետրոսյանին ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցները տվել են հարցեր, որոնց նա պատասխանել է, ոստիկանները չեն կազմել որևէ փաստաթուղթ, այդ թվում՝ արձանագրություն, չեն տրամադրել փաստաբան կամ իրավախորհրդատու:

2.20. Ա.Պետրոսյանը ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտ աշխատակիցների կողմից ազատությունից զրկվել է շուրջ 3 ժամ:

2.21. Ճանապարհային ոստիկանության աշխատակիցները 2013թ. մարտի 25-ից հայցվորին պատկանող VAZ 2106 մակնիշի ավտոմեքենան ստիպել են, որ կանգնեցնի հատուկ պահպանման տարածքում և այնտեղ են պահել միջև 2013թ. մարտի 27-ը;

2.22. Հայցվորը 2013թ. մարտի 26-ին այցելել է Ճանապարհային ոստիկանության հատուկ պահպանման տարածք մեքենան վերցնելու նպատակով, այնտեղ ոստիկանության աշխատակից Գրիգորյանը կատարել է առաջարկություն, որ Ա.Պետրոսյանը վճարի 30.000 ՀՀ դրամի փոխարեն 50.000 ՀՀ դրամ և վերցնի մեքենան, որի հետ բնականաբար նա չի համաձայնվել:

2.23. 2013թ. մարտի 27-ին ժամը 11-ի սահմաններում ճանապարհային ոստիկանության աշխատակիցները զանգահարել են ԳԱԼԱ հեռուստաընկերություն և հրավիրել են Ա.Պետրոսյանին ճանապարհային ոստիկանություն:

2.24. 2013թ. մարտի 27-ին Ա.Պետրոսյանը այցելել է ճանապարհային ոստիկանության, նրան հրավիրել են ճանապարհային ոստիկանության աշխատակից Գրիգորյանի աշխատասենյակ, որտեղ գտնվել են նաև ոստիկանության հասարակական կարգի պահպանման 3 աշխատակիցներ:

2.25. Ոստիկանության հասարակական կարգի պահպանման աշխատակիցները պնդել են, որ իբր Արմեն Պետրոսյանը կատարել է Ռիժկովի փողոցում ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, մասնավորապես իբր Ա.Պետրոսյանը անցել է հոծ գծի վրայով:

2.26. Արմեն Պետրոսյանը պատասխանել է, որ իր կողմից տվյալ օրը նման խախտում չի կատարվել, որից հետո ոստիկանության աշխատակից Գրիգորյանը հանձնարարել է պետավտոտեսուչներին կազմել վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ ակտ:

2.27. 2013թ. մարտի 27-ին կազմվել է թիվ 326415 վարչական իրավախախտում կատարելու մասին ակտը, ըստ որի Ա.Պետրոսյանը ենթարկվել է 5.000 ՀՀ դրամ վարչական պատասխանատվության:

3. Հայցի պահանջի իրավական հիմքերը.

3.1. ՀՀ Սահմանադրությունը Հայաստանում որպես բարձրագույն արժեք է սահմանել է մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները (հոդված 3-րդ): ՀՀ Սահմանադրությունը պետությանը սահմանափակել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (նույն տեղում): Սահմանադրությունը, ի թիվս այլոց, սահմանել է, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն (հոդված 6-րդ):

ՀՀ Սահմանադրությունն իր իրավազորության ներքո գտնվող անձանց, որպես անմիջականորեն գործող իրավունք, ի թիվս այլոց, երաշխավորում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (հոդված 16), ազատ տեղաշարժվելու իրավունք (հոդված 25):

Վերոգրյալ իրավունքները բացարձակ իրավունքներ չեն և Սահմանադրությունը նախատեսում է դրանց սահմանափակման հավանականությունը.

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ 1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից. 2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը. 3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով. 4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած կամ, երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. 5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով. 6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով. 7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Թվարկված մյուս իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար (հոդված 43):

Սահմանադիրը նախանշել է այն դեպքերը և իրավունքների սահմանափակումների շրջանակները, որոնց սահմաններում օրենսդիրը պետք է կարգավորի իրավահարաբերությունները: Սահմանադիրը, թեև օրենսդրին լիազորել է օրենքով տալ իրավունքները սահմանափակող իրավակարգավորումներ, սակայն սահմանել է ևս մեկ երաշխիք՝ որպեսզի այդ սահմանափակումները չգերազանցեն Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները (հոդված 43):

Վերոգրյալ սահմանադրական իրավունքները երաշխավորված են նաև Հայաստանի մասնակցությամբ մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Կոնվենցիայի 5, Կոնվենցիայի կից № 4 արձանագրության 2-րդ հոդվածով և Հայաստանը պարտավորվել է ապահովվել դրանք: Իսկ այդ իրավունքների խախտման դեպքում՝ ապահովել դրանց դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

3.2.Փաստ է, որ ոստիկանները.

- Անօրինական կարգով «զոռբայությամբ» Արմեն Պետրոսյանին բերման են ենթարկել
- արգելել են մեկնի աշխատանքի,
- Ա. Պետրոսյանին պատկանող VAZ 2106 մակնիշի ավտոմեքենան երեք օր պահել են
- նրան ազատազրկել են:

Կասկածից վեր է, որ ոստիկանների կողմից տեղի է ունեցել հայցվորին, ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքներին միջամտություն: Մնում է պարզել՝ միջամտությունը եղե՞լ է արդյոք օրենքով նախատեսված, թե՞ ոչ, եթե միջամտությունը եղել է օրենքով նախատեսված, ապա հետապնդե՞լ է արդյոք իրավաչափ նպատակ, և, եթե եղել է օրենքով նախատեսված ու հետապնդել է իրավաչափ նպատակ, ապա եղե՞լ է արդյոք անհրաժեշտ ժողովրդավարական հասարակարգում՝ այդ նպատակներին հասնելու համար:

3.3. Փաստ է, որ հայցվորը չի ունեցել այնպիսի կարգավիճակ կամ նրա վարքագծում չեն եղել այնպիսի դրսևորումները, որոնք համապատասխանեն նրա՝ վերոգրյալ իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ նախապայմաններին: Բացակայել են թե՛ փաստական, թե՛ իրավական հիմքերը՝ Վստահորդիս ազատազրկելու նրան պատկանող մեքենան արգելանքի վերցնելու համար, հետևաբար՝ ոստիկանների կողմից նրանց իրավունքներին միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով:

3.4. Հայցվորի իրավունքներին միջամտելիս, նրա իրավունքները սահմանափակելիս, այդ թվում՝ նրա նկատմամբ ուժի գործադրմամբ ոստիկանության տանելիս ու այնտեղ պահելով, նրան չեն ներկայացվել իր իրավունքների սահմանափակման հիմքերն ու պատճառները, չեն ծանոթացրել և բացատրել դրանից

բխող իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև նրան չեն աջակցել իր իրավունքների իրացմանը:

«Ոստիկանության մասին» ՀՀ 16.05.2001թ ՀՕ-177 օրենք օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»:

Բացի այն, որ ոստիկանները չեն ունեցել որևէ իրավական և փաստական հիմք՝ Վստահորդիս իրավունքների սահմանափակման համար, այդպիսի հիմքերի ենթադրյալ առկայության դեպքում, նրանք խախտել են հայցվորի «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքը՝ անմիջապես տեղյակ լինել իր իրավունքների սահմանափակման հիմքերն ու պատճառների մասին:

3.5.«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը և վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Պաշտոնատար անձանց՝ ոստիկանների գործողությունները սահմանված չեն եղել օրենքով, հետևաբար դրանք ոչ իրավաչափ են:

Ոստիկանների գործողությունների օրենքով նախատեսված չլինելու հիմքով ոչ իրավաչափ լինելու պարագայում, իմաստազրկվում է այդ միջամտության՝ իրավաչափ նպատակ հետապնդելու և ժողովրդավարական հասարակությունում այդ նպատակին հասնելու համար պիտանի լինելու հանգամանքների քննության առարկա դարձնելը:

<u>4. Վարչական պատասխանատվության ենթարկելու 326415 ակտը անվավեր ճանաչելու վերաբերյալ պնդումներ.</u>

4.1. ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝
ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում
բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նշված հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն Արմեն Պետրոսյանի տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ տվյալ իրավախախտումը կատարելու հանգամանքի ապացուցման բեռը, ըստ վերը նշված հոդվածի կրում է վարչական մարմինը տվյալ պարագայում ճանապարհային ոստիկանության աշխատակիցները: Սակայն տվյալ պարագայում ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ ձևով չի ապացուցվել վստահորդիս տրանսպորտային միջոցը վարելիս կատարած խախտման փաստը:
Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական

մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

Ճանապարհային ոստիկանության կողմից որևէ ձևով չի ապացուցվել վստահորդիս իրավախախտում կատարելու փաստը, ոստիկանության աշխատակիցների կողմից ցույց չի տրվել տեսագրված նյութ, որը հավաստի, որ նա կատարել եմ ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից նշված իրավախախտումը, որը նրա կողմից թույլ չի տրվել:

ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.2. ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

Վիճարկվող թիվ ԱԷ 326415 վարչական ակտը չունի ակտով լուծվող հարցի նկարագրություն, ակտի ընդունման հիմնավորում, որի համար, օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ապացույցներ, և ընդունված որոշման շարադրանքը, ակտի ընթերցումից դժվար է ենթադրել թե ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենքի, որ հոդվածով է կազմվել այն: Այսինքն՝ սույն ակտը կազմվել է ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտմամբ, ինչի համար ապացույց է հաղիսանում հենց կազմված ակտը: Բացի այդ՝ ակտը կազմվել է հայցվորի կողմից թույլ չտրված խախտման համար:

4.3. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացած իրավախախտման վերաբերյալ ճանապարհային ոստիկանության աշխատակիցները որևէ փաստ չեն ներկայացրել, հետևաբար վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը և նրանց պահանջը եղել է անհիմն, համաձայն չլինելով կազմված վարչական ակտի հետ վստահորդս այն չի ստորագրել:

4.4. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24[1]-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարորդին տրանսպորտային միջոցի վարումից հեռացնելու դեպքում ոստիկանության ծառայողն ապահովում է ուղևորների տեղափոխումն ու բեռների պահպանումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե ոստիկանության ծառայողը վարորդին տրանսպորտային միջոցի վարումից հեռացնում է տրանսպորտային միջոցն օգտագործելու նպատակով, ապա նա վարորդի պահանջով պարտավոր է նրան տրամադրել համապատասխան տեղեկանք (կտրոն)՝ նշելով ուղևորության տևողությունը,

անցած տարածությունը, իր ազգանունը, պաշտոնը, ծառայողական վկայականի համարը և ստորաբաժանման անվանումը:

Չնայած այն հանգամանքին, որ Արմեն Պետրոսյանը մի քանի անգամ ճանապարհային ոստիկանության աշխատակիցներից պահանջել է նրան տրամադրել տեղեկանք այն մասին, որ ես հեռացվել եմ տրանսպորտային միջոցի վարումից և տրանսպորտային միջոցը տեղափոխվում է տուգանային հրապարակ, ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ փաստաթուղթ չի տրամադրվել: Վերը նշված դրույթներից ոչ մեկը ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից չի պահպանվել, նրանց կողմից չի ապահովվել հայցվորի մեքենան տուգանային հրապարակ տանելուց առաջ չի բացատրվել նրա իրավունքները և պարտականություններ նրան տրանսպորտային միջոցի վարումից հեռացնելուց հետո չի կազմվել համապատասխան տեղեկանք: Այսինքն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին վարչական ակտը կազմվել է օրենքի խախտմամբ, մասնավորապես ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից չի պահպանվել օրենքով սահմանված կարգը:

4.5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին հոդվածի ա/ ենթակետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Այսպիսով 2013 թ. մարտի 27-ի թիվ ԱԷ 326415 վարչական իրավախախտման գործով կազմված վարչական ակտը չի համապատասխանում օրենքով սահմանված կարգին՝ կազմված է օրենքի խախտմամբ, պետավտոտեսչության աշխատակիցների կողմից լիազորությունների չարաշահմամբ, հետևաբար այն ենթակա է անվավեր ճանաչման:

5.Հայցվորների պահանջը

Հիմք ընդունելով սույն գործով ներկայացված փաստերը, դրանց կազմին համապատասխան իրավական ակտերի նորմերով նախատեսված իրավական հետևանքները, վարչական դատարանին խնդրում եմ առաջնորդվել սույն հայցում վկայակոչված իրավական ակտերի դրույթներով, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 1, 3, 16, 25, 43, 18, 19-րդ Կոնվենցիայի 5, 6, 13-րդ Կոնվենցիայի կից № 4 արձանագրության 2-րդ 6, 13-րդ հոդվածներով՝ հայցվորը խնդրել է դատարանին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը,

5.2. Ճանաչել՝ ոչ իրավաչափ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները (անգործությունը):

5.3. Ճանաչել անվավեր՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2013թ. մարտի 27-ին կազմված թիվ ԱԷ 326415 վարչական ակտը:

Պատասխանողի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.

Պատասխանող՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը հայցադիմումին ներկայացրել է գրավոր առարկություն հայտնելով, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Վիճարկելով 25.03.2013 թվականին ճանապարհային ոստիկանության աշխատակիցների գործողությունները՝ հայցվորը նշում է, թե իբր հայցվորի բնակարան այցելելիս և նրան Ոստիկանություն հրավիրելիս ոստիկանության աշխատակիցները չեն ներկայացրել իրենց գործողությունների իրավական հիմքերը, Ա.Պետրոսյանի իրավունքների սահմանափակման պատճառները և չեն պարզաբանել վերջինիս իրավունքներն ու պարտականությունները: Այս առումով հայցվորի ներկայացրած պնդումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ 25.03.2013 թվականին

Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 2-րդ սպայական վաշտում ստացվել է Ոստիկանության Գյումրու բաժնի պետի կողմից ուղարկված ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ նյութերը /ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար Գ.Կարապետյանի զեկուցագիրը/, որը հիմք է հանդիսացել Ճանապարհային ոստիկանության կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման գործի քննարկման և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Վերոնշվածով պայմանավորված Ճանապարհային ոստիկանության աշխատակիցները այցելել են ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պ/հ ավտոմեքենայի վարորդ Ա. Պետրոսյանի՝ ք. Գյումրի Պարոնյան 27 հասցեում գտնվող բնակարան, որտեղ Պետրոսյանին հայտնել են, որ ոստիկանության Գյումրու բաժնից ստացվել է զեկուցագիր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պ/հ ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ և դրա կապակցությամբ գործի քննարկման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Ա. Պետրոսյանին հրավիրել են ՃՈ: Պետրոսյանը համաձայնվել է ներկայանալ Ճանապարհային ոստիկանության և Ճանապարհային ոստիկանության տեսուչի հետ միասին իր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայով՝ ուղևորվել են դեպի Ճանապարհային ոստիկանություն: Այս առումով դատարանի ուշադրությունն է հրավիրվում այն փաստի վրա, որ Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել Ճանապարհային ոստիկանություն ներկայանալու պատճառների մասին և պատրաստակամություն է հայտնել հենց այդ պահին ներկայանալ, ավելին՝ նա եղել է իր մեքենայով և ինքն էլ այն վարել է, ինչը խոսում է այն մասին, որ հայցվորը միանշանակ ղեկավարվել է իր ազատ կամաարտահայտությամբ, հետևաբար՝ անհիմն են հայցվոր պնդումներն այն մասին, որ իբր հենց տանից վերջինիս հարկադրաբար, իր կամքին հակառակ փորձել են տանել ոստիկանություն: Ավելին՝ հայցադիմումում շարադրված փաստերի հակիրճ նկարագրությունից երևում է անգամ, որ հայցվորը փոխել է Ճանապարհային ոստիկանություն ներկայանալու իր դիրքորոշումը այն բանից հետո միայն, երբ Ճանապարհին իրեն զանգահարել է ԳԱԼԱ Հ/Ը լրագրողը և տեղեկացրել, որ կանչված է աշխատանքի, որից հետո միայն հայցվորը փոխել է երթևեկության ուղղությունը և շարժվել դեպի ԳԱԼԱ Հ/Ը, կանգ առել ,,Նանե" հոթելի դիմաց: Հետևաբար՝ մինչև նշված պահը ոստիկանության գործողություններում առկա չի եղել Արմեն Պետրոսյանի ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների որևէ միջամտություն, հետևաբար՝ չի կարող քննության առարկա դառնալ գոյություն չունեցող միջամտության իրավաչափությունը և հայցվորի կողմից վկայակոչված՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ, 25-րդ, 43-րդ հոդվածների , ,,Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին" կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման մնասին ենթադրությունները:

Ինչ վերաբերում է ,,Նանե" հոթելի դիմացը և դրանից հետո տեղի ունեցած իրադարձություններին, ապա այս առումով դատարանի ուշադրությունն է հրավիրվում հետևյալին:

,,Ոստիկանության մասին" ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ,,Ոստիկանությունը, վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս, իրավունք ունի

1) կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ.

2) իրականացնել վարչական ձերբակալում, կիրառել վարչական իրավախախտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոցներ”:

Որպես վարչական իրավախախտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոց հանդիսանում է ՎԻՎՕ 258-րդ հոդվածով նախատեսված ,,Խախտողի բերումը”, համաձայն որի՝ ,,Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն”:

ՀՀ ՎԻՎՕ 257-րդ հոդվածը նախատեսում է այն դեպքերը, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում, ըստ որի ,,Այն դեպքում, եթե անձը չի վիճարկում թույլ տված խախտումը, և նախազգուշացման կարգով նրա նկատմամբ նշանակվող վարչական տուժանքը կամ տուգանքը տասը դրամից ավելի չէ, արձանագրություն չի կազմվում: Այդպիսի դեպքերում նշանակվող տուգանքը ոստիկանության աշխատողի կողմից կարող է գանձվել խախտումը կատարելու տեղում: Տուգանքի գանձման մասին խախտողին տրվում է սահմանված նմուշի անդորրագիր, որը ֆինանսական խիստ հաշվետվության փաստաթուղթ է: Արձանագրություն չի կազմվում նաև այլ դեպքերում, երբ օրենսդրությանը համապատասխան տուգանքը նշանակվում և գանձվում է, իսկ նախազգուշացումը ձևակերպվում է իրավախախտում կատարելու տեղում: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ,,Եթե խախտողը վիճարկում է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումներ կատարելու համար իր նկատմամբ նշանակվող տույժը, ապա արձանագրություն է կազմվում սույն օրենսգրքի 254 հոդվածին համապատասխան”: Հետևաբար՝ քննարկվող դեպքում առկա չի եղել որևէ հիմք արձանագրություն չկազմելու համար, այն է՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը սույն դեպքում պարտադիր է եղել, ինչն էլ հանդիսանում է Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով, ՎԻՎՕ 258-րդ հոդվածով նախատեսված իրավական հիմքերը՝ ՃՈ աշխատակիցների կողմից Ա. Պետրոսյանի նկատմամբ ,,խախտողի բերում” իրականացնելու համար:

Նման պայմաններում ոստիկանության աշխատակիցների գործողությունները հետապնդել են իրավաչափ նպատակ, այն նախատեսված է եղել օրենքով և չի հանգեցրել Ա. Պետրոսյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման:

Այս համատեքստում անհիմն են հայցվորի պնդումներն այն մասին, իբր Ոստիկանության աշխատակից Մ. Սարգսյանը հարձակվել է հայցվորի վրա և սկսել քաշքշել վերջինիս՝ նպատակ ունենալով նստեցնել ավտոմեքենան, քանի որ հայցվորի կողմից ներկայացված տեսանյութի մեջ առկա է Սարգսյանի կողմից հայցվորի թևից թեթև քաշելու փաստ միայն, ինչը չի համապատասխանում հայցվորի նկարագրած ագրեսիվ վարքագծին /հարձակում և այլն/, իսկ Սարգսյանի վարքագիծը միանշանակ իրավաչափ է և անհրաժեշտ է եղել Ա. Պետրոսյանի նկատմամբ ,,խախտողի բերում” իրականացնելու համար:

Դատարանի ուշադրությունն է հրավիրվում նաև այն հանգամանքի վրա, որ հայցվորի իրավունքները չեն ենթարկվել այն աստիճանի սահմանափակման, ինչպիսին նկարագրում է հայցվորը, այն է վերջինս չի ենթարկվել բերման, ձերբակալման /նաև վարչական/, այլ ,,խախտողի բերումը”, թվարկվածի համեմատ իրենից ներկայացնում է առավել նվազ ներգործություն իրավախախտի նկատմամբ, հետևաբար այս համատեքստում քննարկման է ենթակա միայն ,,խախտողի բերում” իրականացնելու հիմքերը, այլ ոչ թե ,,բերման

ենթարկելու", ինչպես նշում է հայցվորը, որի դեպքում գոյություն ունեցող իրավական հիմքերը և ընթացակարգերը սույն գործին վերաբերելի չեն, ուստի հայցվորի պնդումները ,,անօրինական բերման ենթարկելու մասին" նույնպես անհիմն են:

Անդրադառնալով հայցվորի այն պնդումներին, համաձայն որի՝ վերջինիս իրավունքներին միջամտելիս, նրա իարվունքները սահմափակելիս նրան չեն ներկայացվել իր իարվունքների սահմանափակման հինքերն ու պատճառները, չեն ծանոթացրել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, չեն աջակցել իր իրավունքների իրացմանը, հարկ ենք համարում նշել, որ

1. Ինչպես արդեն նշվեց վերևում, ՃՈ աշխատակիցների կողմից Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել ՃՈ ներկայանալու պատճառների մասին հենց այցելության սկզբից,

2. Այդ մասին մի քանի անգամ նա տեղեկացվել է նաև վիճարկվող իրադարձության ընթացքում, ինչպես նաև ՃՈ-ում

3. ՃՈ հայցվորին ուղեկցել են ևս երկու անձինք /հավանաբար՝ ,,ԳԱԼԱ" Հ/Ը աշխատակիցներ/, որտեղ՝ աշխատասենյակում, կրկին անգամ Պետրոսյանին մատչելի և հասկանալի լեզվով ներկայացվել ՃՈ ներկայանալու հիմքերն ու պատճառները, ծանոթացվել և բացատրվել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները

Հայցվորը ոստիկանությունում գտնվել է մոտ 1,30-ից 2 ժամ և հեռացել, իսկ համաձայն ՎԻՎՕ 277-րդ հոդվածի 1-ին մասի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են ,,Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում", ՎԻՎՕ 37-րդ հոդվածի համաձայն ,,Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի", ՎԻՎՕ 267-րդ հոդվածի համաձայն ,,Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ", որից հետո հաջորդ օրը՝ 26.03.2013թ-ին, հայցվորը փոստային ծանուցմամբ կրկին անգամ ծանուցվել է, որ ոստիկանության Գյումրու բաժնից ստացվել է զեկուցագիր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ և դրա կապակցությամբ գործի քննարկման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Ա.Պետրոսյանին հրավիրել են ՃՈ:

Ամփոփելով վերոշարադրվածը ակնհայտ է, որ հայցվոր Ա. Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել ՃՈ ներկայանալու պատճառների մասին հենց այցելության սկզբից, մինչև ,,Նանե" հոթելի դիմաց հայցվորի իրավունքները, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, չեն ենթարկվել որևէ սահմափակման, իսկ դրանից հետո Պետրոսյանի նկատմամբ իրականացվել է ՎԻՎՕ 258-րդ հոդվածով նախատեսված ,,Խախտողի բերում", որի հիմքերը վերևում արդեն մատնաշվել են, հետևաբար՝ ոստիկանության գործողությունները նախատեսված են եղել օրենքով և հետապնդել են իրավաչափ նպատակ, իսկ անհարժեշտ արձանագրության կազմման բացակայությունը պայմանավորված է եղել հայցվորի և նրանց ուղեկցող անձանց վարքագծով:

Վերոշարադրվածից ելնելով՝ Ա. Պետրոսյանի ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ՀՀ ՃՈ 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցվորի պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման:

Հայցվորը պահանջել է ներկայացրել նաև նաև ՀՀ ՃՈ 27.03.2013 թվականի թիվ ԱԷ 326415 վարչական ակտը անվավեր ճանաչելու, մասին՝ նշելով, որ ՃՈ կողմից որևէ ձևով չի ապացուցվել հայցվորի իրավախախտում կատարելու փաստը, վիճարկվող վարչական ակտը չունի ակտով լուծվող հարցի նկարագրություն, ակտի ընթերցումից դժվար է ենթադրել, թե ՀՀ ՎԻՎՕ որ հոդվածով է կազմվել այն:

ՀՀ ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

Քննարկվող դեպքում ՃՈ-ն ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, ինչպես նաև որևէ խոչընդոտ չի հարուցել վարույթի մասնակցի նկատմամբ վարույթին առնչվող դիմումներ, փաստաթղթեր ներկայացնելուն: Այսպես՝

25.03.2013 թվականին ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 2-րդ սպայական վաշտում ստացվել է Ոստիկանության Գյումրու բաժնի պետի կողմից ուղարկված ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պ/հ ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ նյութերը /ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար Գ. Կարապետյանի զեկուցագիրը/, որը հիմք է հանդիսացել ՃՈ կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման գործի քննարկման և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: 25.03.2013թ-ին վերը նկարագրված պատճառներով գործի քննարկումը չի իրականացվել, և որպեսզի ապահովվի Ա. Պետրոսյանի մասնակցությունը գործի քննարկմանը այն իրկանացվել է 27.03.2013 թվականին, որին ներկա է եղել նաև Ա. Պետրոսյանը, ինչը հաստատված է նաև 27.03.2013 թվականին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, որը ստորագրվել է Պետրոսյանի կողմից՝ ,,արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա" նշումով: Նշված օրը գործի քննարկման շրջանակներում բացատրություններ են վերցվել ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի ոստիկան Հ. Մուրադյանից և ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի ոստիկան Տ. Դանիելյանից, որոնց բացատրություններով հայտնած ինֆարմացիան համապատասխանել է զեկուցագրում հայտնված ինֆորմացիայի հետ:

,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,,Վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար":

Հետևաբար՝ հայցվորի իրավախախտում կատարելու փաստը հաստատվել է ինչպես ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար Գ. Կարապետյանի զեկուցագրով, այնպես էլ ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի ոստիկան Հ. Մուրդյանի և ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի ոստիկան Տ. Դանիելյանի բացատրություններով, որոնք ՀՀ ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" օրենքի 42-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են ապացույցներ:

Հացվորը նշում է նաև, որ վիճարկվող վարչական ակտը չունի ակտով լուծվող հարցի նկարագրություն, ակտի ընթերցումից դժվար է ենթադրել, թե ՀՀ ՎԻՎՕ որ հոդվածով է կազմվել այն, այն կազմված է ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի դրույթների խախտմամբ:

Այս առումով դատարանի ուշադրությունն է հրավիրվում ներքոհիշյալ հանգամանքների վրա.

,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազ·ային պայմանա·րերով: Տվյալ դեպքում, վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որի նկատմամբ կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նորմերը: Նշված դիրքորոշումն է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանն իր 04.12.2009 թվականի թիվ ՎԴ/1513/05/09, 24.07.2009 թվականի թիվ ՎԴ3/0414/05/08, 25.12.2009թ. թիվ ՎԴ /2848/05/09/, 25.12.2009թ. թիվ ՎԴ /2288/05/09/ որոշումներով: Իսկ մասնավորապես 2010 թվականի իր թիվ ՎԴ 2/0197/5/09 որոշմամբ հայտնել է՝ ,,Մասնավորապես, վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննության ընթացքում ընդունված որոշման բովանդակության համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված են այլ պահանջներ, քան ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գրավոր վարչական ակտի հիմնավորումներին ներկայացվող պահանջները":

Այսինքն՝ թիվ ԱԷ 326415 վարչական ակտը կազմվել է օրենքով սահմանված կարգին համապատասխան:

3. Ինչ վերաբերում է հայցվորի այն պնդումներին, որ ՀՀ ,,Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին" օրենքի կարգով վերջինիս չի տարամադրվել համապատասխան տեղեկանք, ապա հարկ ենք համարում նշել, որ նույն օրենքի 24[1] հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ,,Եթե ոստիկանության ծառայողը վարորդին տրանսպորտային միջոցի վարումից հեռացնում է տրանսպորտային միջոցն օգտագործելու նպատակով, ապա նա վարորդի պահանջով պարտավոր է նրան տրամադրել համապատասխան տեղեկանք (կտրոն)՝ նշելով ուղևորության տևողությունը, անցած տարածությունը, իր ազգանունը, պաշտոնը, ծառայողական վկայականի համարը և ստորաբաժանման անվանումը", իսկ սույն դեպքում ոստիկանության ծառայողը վարորդին տրանսպորտային միջոցի վարումից չի հեռացրել <u>տրանսպորտային միջոցն օգտագործելու նպատակով:</u>

Բացի այդ՝ վարորդ Ա. Պետրոսյանը երբևէ չի պահանջել տրամադրել համապատասխան տեղեկանք, այդ կապակցությամբ հայցվոր կողմը որևէ ապացույց չի ներկայացրել:

Իսկ ոստիկանության բոլոր գործողությունները արձանագրված են օրենքին համապատասխան, հետևաբար հայցվոր կողմի այս պնդումները ևս անհիմն են:

Ոստի՝ վերոնշված հիմնավորումներով հայցն ամբողջությամբ ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը խնդրել է դատարանին Արմեն Պետրոսյանի ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ՀՀ ՃՈ 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ ՃՈ 27.03.2013 թվականի թիվ ԱԷ 326415 վարչական ակտը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցն ամբողջությամբ մերժել:

ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով կողմերի և վկաների բացատրությունները, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները, և դրանցից յուրաքանչյուրը գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի հետևյալ պատճառաբանությամբ:

,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

,,Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ,,...վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները...":

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության վարույթը կարգավորող նորմերով, հետևաբար ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Դատաքննությամբ պարզվեց, որ հայցվորի նկատմամբ 5.000 ՀՀ դրամի տուգանք նշանակելու իրավական հիմքը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ ,,Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշանների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատակի չափով":

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելն, ընդունված որոշման կատարումն ապահովելը...:

Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝

վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված է. ,,Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ":

Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ ,,վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով":

Նույն օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա...:

Տվյալ դեպքում սույն գործով վիճարկվող ԱԷ 326415 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ապացույց է հանդիսացել 21.03.2013 թվականի Ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար՝ ոստիկանության ավագ Գրիգոր Սամվելի Կարապետյանի զեկուցագիրը, այն մասին որ ,,ՎԱԶ 2106 մակնիշի 10OL887 պետհամարանիշի ավտոմեքենան որը երթևեկության կանոնները խախտելով ,,Պերեզ" խանութի դիմացից հոց գիծը հատելով շրջադարձ կատարեց...":

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում, արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, ..., ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ" կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ Արմեն Պետրոսյանի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարված լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրել է վարչական մարմինը՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը, հետևաբար վերջինս պարտավոր էր իրականացնել այնպիսի վարչական վարույթ, որի ընթացքում կապահովվեր կոնկրետ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելու, փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները և գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելու օրենքով նախատեսված իր պարտականության կատարումը:

Տվյալ դեպքում վարույթն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր էր ճիշտ գնահատել վարչական իրավախախտման վերաբերյալ զեկուցագիրը, անդրադառնալով նաև Արմեն Պետրոսյանի կողմից կատարված զանցանքի չընդունումը, քանի որ վարչական վարույթում անձը երաշխավորված է հավաստիության կանխավարկածի սկզբունքով, որն ամրագրված է ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդածում: Նշված հոդվածի 1-ին մասով սահմանված է. ,,Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար":

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման գործը, մարմինը (պաշտոնատար անձը) գործի վերաբերյալ որոշում է ընդունում: ... Որոշումը պետք է պարունակի՝ այն ընդունած մարմնի (պաշտոնատար անձի) անվանումը, գործի քննության ժամանակաթիվը, տեղեկություններ այն անձի մասին, որի վերաբերյալ քննվում է գործը, գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը, տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշումը, գործի վերաբերյալ ընդունված որոշումը:

Սույն գործով վիճարկվող որոշման մեջ բացակայում է գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը: Մասնավորապես, որոշման նկարագրական մասը որևէ նշում չի պարունակում, թե ինչ գնահատական է տրվել վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքի, այն է՝ վարչական իրավախախտման փաստի վերաբերյալ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայացրած տվյալին այն մասին, որ իր կողմից այդ իրավախախտումը թույլ չի տրվել, ինչի վերաբերյալ վերջինս նշել է:

Ընդ որում միայն այն փաստը, որ Արմեն Պետրոսյանը վարչական վարույթի ընթացքում վիճարկել է իր կողմից իրավախախտում թույլ տալու հանգամանքը, պետք է բավարար լիներ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության աշխատակիցների համար ձեռնարկելու համապատասխան միջոցներ անհրաժեշտ ապացույցների, մանավորապես իրավախախտման տեսաձայնագրության (եթե այդպիսին իրականում եղել է) պահպանման նպատակով: Բացի այդ, տվյալ տեսագրության, որպես վարչական վարույթի ապացույցի, վերաբերյալ նկարագրությունը բացակայում է թե վարչական իրավախախտման վերաբերյալ զեկուցագրի մեջ և թե տուգանք նշանակելու մասին որոշման մեջ:

Նշվածից հետևում է, որ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը վարչական վարույթի ընթացքում ոչ միայն չի ապահովել կոնկրետ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելու, փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները և գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելու օրենքով նախատեսված իր պարտականության կատարումը, այլ նաև չի ապացուցել իրավախախտում կատարած չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած տվյալի հակառակը, ինչից հետևում է, որ քննարկվող փաստական հանգամանքի վերաբերյալ Արմեն Պետրոսյանի ներկայացրած տեղեկությունը, բոլոր դեպքերում, պետք է համարվեր հավաստի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ Արմեն Պետրոսյանի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարված լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը, հետևաբար վերջին էլ դատաքննության ընթացքում պետք է ապացուցեր իր կողմից ընդունված որոշման իրավաչափությունը:

Կրելով ապացուցման պարտականություն՝ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը որոշման հիմքում ընկած հանգամանքներն ապացուցելու համար որևէ ապացույց չի ներկայացրել, մասնավորապես, որ Արմեն Պետրոսյանը 21.03.2013 թվականին ժամը 13 անց 20 րոպեին մեքենան վարելով հոծ գիծը հատելով շրջադարձ կատարել է թե ոչ: Ընդ որում, այդ հանգամանքը հաստատող ապացույցը պետք է առկա լիներ վարչական վարույթի ընթացքում և որպես վարչական վարույթի նյութ դրվեր որոշման հիմքում, քանի որ միայն այդ դեպքում կարելի էր հաստատված համարել Արմեն Պետրոսյանի կողմից իրավախախտում կատարած լինելու հանգամանքը, որն էլ իրավաչափ կդարձներ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը:

,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Սույն գործով հայցվորի կողմից վիճարկվող Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության թիվ ԱԷ 326415 որոշման հետազոտմամբ պարզվեց, որ առկա է ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված հիմք նշված ակտն անվավեր ճանաչելու համար, քանի որ Արմեն Պետրոսյանին վերագրված խախտումը հաստատված չէ, իսկ որոշումը կայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի և ,,Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքների վերը նշված հոդվածների խախտումներով, և Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի սխալ կիրառմամբ:

Վերը նշված հիմնավորումներով ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ Արմեն Պետրոսյանի հայցը՝ 27.03.2013 թվականի թիվ ԱԷ 326415 վարչական ակտն անվավեր ճանաչելու մասով ենթակա է բավարարման:

Դատարանը անդրադառնալով Արմեն Պետրոսյանի ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ՀՀ ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցվորի պահանջներին զտնում է որ այն անհիմն է և ենթակա են մերժման

հետևյալ պատճառաբանությամբ: Վիճարկելով 25.03.2013 թվականին Ճանապարհային ոստիկանության աշխատակիցների գործողությունները՝ հայցվորը հայտնել է, որ իր բնակարան այցելելիս և նրան Ոստիկանություն հրավիրելիս ոստիկանության աշխատակիցները չեն ներկայացրել իրենց գործողությունների իրավական հիմքերը, Արմեն Պետրոսյանի իրավունքների սահմանափակման պատճառները և չեն պարզաբանել վերջինիս իրավունքներն ու պարտականությունները: Սակայն դատաքննության ընթացքում վկաների ցուցմունքներից պարզվեց որ հայցվորի ներկայացրած պնդումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ 25.03.2013 թվականին Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 2-րդ սպայական վաշտում ստացվել է Ոստիկանության Գյումրու բաժնի պետի կողմից ուղարկված ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ նյութերը /ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար Գ.Կարապետյանի զեկուցագիրը/, որը հիմք է հանդիսացել Ճանապարհային ոստիկանության կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման գործի քննարկման և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Վերոնշվածով պայմանավորված Ճանապարհային ոստիկանության աշխատակիցները այցելել են ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Ա. Պետրոսյանի՝ ք. Գյումրի Պարոնյան 27 հասցեում գտնվող բնակարան, որտեղ Պետրոսյանին հայտնել են, որ ոստիկանության Գյումրու բաժնից ստացված զեկուցագրի մասին, ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ և դրա կապակցությամբ գործի քննարկման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Ա. Պետրոսյանին հրավիրել են Ճանապարհային ոստիկանություն: Պետրոսյանը համաձայնվել է ներկայանալ Ճանապարհային ոստիկանություն և Ճանապարհային ոստիկանության տեսուչի հետ միասին իր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայով ուղևորվել են դեպի Ճանապարհային ոստիկանություն: Այսինքն Ա.Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել Ճանապարհային ոստիկանություն ներկայանալու պատճառների մասին և պատրաստակամություն է հայտնել հենց այդ պահին ներկայանալ, ավելին՝ նա եղել է իր մեքենայով և ինքն էլ այն վարել է, ինչը խոսում է այն մասին, որ հայցվորը միանշանակ ղեկավարվել է իր ազատ կամաարտահայտությամբ, հետևաբար՝ անհիմն են հայցվորի պնդումներն այն մասին, որ վերջինիս հարկադրաբար, իր կամքին հակառակ փորձել են տանել ոստիկանություն: Ավելին՝ հայցադիմումում շարադրված փաստերի նկարագրությունից երևում է անգամ, որ հայցվորը փոխել է Ճանապարհային ոստիկանություն ներկայանալու իր դիրքորշումը այն բանից հետո միայն, երբ Ճանապարհին իրեն զանգահարել են ,,ԳԱԼԱ" հեռուստաընկերությունից և տեղեկացրել, որ կանչված է աշխատանքի, որից հետո միայն հայցվորը փոխել է երթևեկության ուղղությունը և շարժվել դեպի ,,ԳԱԼԱ" հեռուստաընկերություն, կանգ առել ,,Նանե" հոթելի դիմաց: Հետևաբար՝ մինչև նշված պահը ոստիկանության գործողություններում առկա չի եղել Արմեն Պետրոսյանի ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների որևէ միջամտություն:

,,Ոստիկանության մասին" ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ,,Ոստիկանությունը, վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս, իրավունք ունի՝ 1) կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ. 2) իրականացնել վարչական ձերբակալում, կիրառել վարչական իրավախախտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոցներ": Որպես վարչական իրավախախոտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոց հանդիսանում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված

,,Խախտողի բերումը", համաձայն որի՝ ,,Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն": Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 257-րդ հոդվածը նախատեսում է այն դեպքերը, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում, ըստ որի ,,Այն դեպքում, եթե անձը չի վիճարկում թույլ տված խախտումը, և նախազգուշացման կարգով նրա նկատմամբ նշանակվող վարչական տուժանքը կամ տուգանքը տասը դրամից ավելի չէ, արձանագրություն չի կազմվում: Այդպիսի դեպքերում նշանակվող տուգանքը ոստիկանության աշխատողի կողմից կարող է գանձվել խախտումը կատարելու տեղում: Տուգանքի գանձման մասին խախտողին տրվում է սահմանված նմուշի անդորրագիր: Արձանագրություն չի կազմվում նաև այլ դեպքերում, երբ օրենսդրությանը համապատասխան տուգանքը նշանակվում և գանձվում է, իսկ նախազգուշացումը ձևակերպվում է իրավախախտում կատարելու տեղում: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ,,Եթե խախտողը վիճարկում է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումներ կատարելու համար իր նկատմամբ նշանակվող տույժը, ապա արձանագրություն է կազմվում սույն օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան": Հետևաբար՝ քննարկվող դեպքում առկա չի եղել որևէ հիմք արձանագրություն չկազմելու համար, այն է՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը սույն դեպքում պարտադիր է եղել, ինչն էլ հանդիսանում է ,,Ոստիկանության մասին" ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված իրավական հիմքերը՝ ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից Ա. Պետրոսյանի նկատմամբ ,,խախտողի բերում" իրականացնելու համար:

Նման պայմաններում ոստիկանության աշխատակիցների գործողությունները հետապնդել են իրավաչափ նպատակ, այն նախատեսված է եղել օրենքով և չի հանգեցրել Ա. Պետրոսյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման:

Դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների գնահատմամբ դատարանը գտնում է, որ հայցվորի պնդումներն այն մասին, որ Ոստիկանության աշխատակից Մ. Սարգսյանը հարձակվել է հայցվորի վրա և սկսել քաշքշել վերջինիս՝ նպատակ ունենալով նստեցնել ավտոմեքենան, չի համապատասխանում դատաքննությամբ ձեռք բերված ապացույցներին, քանի որ հայցվորի կողմից դատաքննությանը ներկայացված տեսանյութից, որը դատաքննության ընթացքում հետազոտվեց, նման փաստ չի երևում, ինչը չի համապատասխանում հայցվորի նկարագրած ագրեսիվ վարքագծին /հարձակում և այլն/, իսկ ոստիկանության աշխատակցի վարքագիծը անհրաժեշտ է եղել Ա. Պետրոսյանի նկատմամբ ,,խախտողի բերում" իրականացնելու համար:

Անդրադառնալով հայցվորի այն պնդումներին, համաձայն որի՝ վերջինիս իրավունքներին միջամտելիս, նրա իրավունքները սահմափակելիս նրան չեն ներկայացվել իր իրավունքների սահմանափակման հինքերն ու պատճառները, չեն ծանոթացրել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, չեն աջակցել իր իրավունքների իրացմանը, դատարանը ձեռք բերված ապացույցների գնահատմամբ գտնում է, որ հայցվոր Ա.Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել ճանապարհային ոստիկանություն ներկայանալու պատճառների մասին հենց այցելության սկզբից, այդ մասին մի քանի անգամ նա տեղեկացվել է նաև վիճարկվող իրադարձության ընթացքում, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության աշխատանքային շենքում նույնպես Պետրոսյանին ներկայացվել է ճանապարհային ոստիկանություն ներկայանալու հիմքերն ու պատճառները, ծանոթացվել և բացատրվել

դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, հաջորդ օրը՝ 23.03.2013 թվականին, հայցվորը փոստային ծանուցմամբ նորից ծանուցվել է, որ ոստիկանության Գյումրու բաժնից ստացվել է զեկուցագիր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ և դրա կապակցությամբ գործի քննարկման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Ա.Պետրոսյանին հրավիրել են ճանապարհային ոստիկանություն: Ամփոփելով վերոշարադրվածը ակնհայտ է, որ հայցվոր Ա. Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել ճանաճարհային ոստիկանություն ներկայանալու պատճառների մասին հենց այցելության սկզբից, մինչև ,,Նանե" հոթելի դիմաց հայցվորի իրավունքները, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, չեն ենթարկվել որևէ սահմափակման, իսկ դրանից հետո Պետրոսյանի նկատմամբ իրականացվել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված ,,Խախտողի բերում", որի հիմքերը վերևում արդեն մատնաշվել են, հետևաբար՝ ոստիկանության գործողությունները նախատեսված են եղել օրենքով և հետապնդել են իրավաչափ նպատակ, իսկ անհարժեշտ արձանագրության կազմման բացակայությունը պայմանավորված է եղել հայցվորի և նրանց ուղեկցող անձանց վարքագծով:

Վերը շարադրված իրավանորմերի վերլուծությունից ելնելով դատարանը Արմեն Պետրոսյանի կողմից ներկայացված հայցապահանջը՝ ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ՀՀ ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու մասին գտնում է որ անհիմն է և ենթակա են մերժման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ այն կազմված է միայն պետական տուրքից, որի հարցը պետք է համարել լուծված նկատի ունենալով այն հանգամաքը որ այն նախապես վճարվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ, 60-րդ, 114-րդ, 123-127-րդ հոդվածներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Արմեն Սերյոժայի Պետրոսյանի /ներկայացուցիչներ՝ Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զալյան/ հայցը բավարարել մասնակի: ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2013 թվականի մարտի 27-ին կազմված թիվ ԱԷ 326415 վարչական ակտը ճանաչել անվավեր: Հայցը մնացած մասով մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ *ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ ,, "----------20 թվականին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ *ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, հաջորդ օրը՝ 23.03.2013 թվականին, հայցվորը փոստային ծանուցմամբ նորից ծանուցվել է, որ ոստիկանության Գյումրու բաժնից ստացվել է զեկուցագիր ,,Վազ 2106" մակնիշի 10 ՕԼ 887 պետհամարանիշի ավտոմեքենայի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ և դրա կապակցությամբ գործի քննարկման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Ա.Պետրոսյանին հրավիրել են ճանապարհային ոստիկանություն: Ամփոփելով վերոշարադրվածը ակնհայտ է, որ հայցվոր Ա. Պետրոսյանը տեսուչների կողմից տեղեկացված է եղել ճանաճարհային ոստիկանություն ներկայանալու պատճառների մասին հենց այցելության սկզբից, մինչև ,,Նանե" հոթելի դիմաց հայցվորի իրավունքները, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, չեն ենթարկվել որևէ սահմափակման, իսկ դրանից հետո Պետրոսյանի նկատմամբ իրականացվել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված ,,Խախտողի բերում", որի հիմքերը վերևում արդեն մատնաշվել են, հետևաբար՝ ոստիկանության գործողությունները նախատեսված են եղել օրենքով և հետապնդել են իրավաչափ նպատակ, իսկ անհարժեշտ արձանագրության կազմման բացակայությունը պայմանավորված է եղել հայցվորի և նրանց ուղեկցող անձանց վարքագծով:

Վերը շարադրված իրավանորմերի վերլուծությունից ելնելով դատարանը Արմեն Պետրոսյանի կողմից ներկայացված հայցապահանջը՝ ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու, ՀՀ ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ սպայական վաշտի աշխատակիցների գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու մասին գտնում է որ անհիմն է և ենթակա են մերժման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ այն կազմված է միայն պետական տուրքից, որի հարցը պետք է համարել լուծված նկատի ունենալով այն հանգամաքը որ այն նախապես վճարվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ, 60-րդ, 114-րդ, 123-127-րդ հոդվածներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով դատարանը

ՎՃՌԵՑ

Արմեն Սերյոժայի Պետրոսյանի /ներկայացուցիչներ՝ Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զալյան/ հայցը բավարարել մասնակի: ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2013 թվականի մարտի 27-ին կազմված թիվ ԱԷ 326415 վարչական ակտը ճանաչել անվավեր: Հայցը մնացած մասով մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ *ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ ,, "----------20 թվականին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ *ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*